

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Տիգրան Արմենի Ղլիջյանի «Ագրոլոգիստիկ համակարգի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ագրոլոգիստիկան գյուղատնտեսական արտադրանքի տեղափոխման ողջ գործընթացի կառավարումն է և դրա կարևորությունը հսկայական է. քանի որ այն ապահովում է սննդի անվտանգությունը, նվազեցնում կորուստները, բարելավում որակը և նվազագույնի հասցնում շրջակա միջավայրի համար վնասակար գործոնները: Արդյունաբերության զարգացումը պայմանավորված է թվայնացմամբ, ագրոարդյունաբերական համալիրի տարրերի ինտեգրմամբ (արտադրությունից մինչև վերամշակում և շուկայավարում), ինչպես նաև արդյունավետ ենթակառուցվածքների ստեղծմամբ, որը «դաշտից մինչև սեղան» ամբողջ շղթան դարձնում է ավելի արագ, ավելի թափանցիկ և ավելի շահավետ բոլոր մասնակիցների համար:

Միջազգային տնտեսական հարաբերությունների ինտենսիվ զարգացման ներկա փուլում առանձնահատուկ կարևորություն է ստացել լոգիստիկան, որը կառավարում է՝ արտադրական, բաշխման, սպառման և տեղեկատվական հոսքերի ամբողջական համակարգը: Ագրոլոգիստիկան առավելապես վերաբերում է ագրարային ոլորտում այդ հարաբերությունների զարգացմանը և գյուղատնտեսության միջազգայնացման պայմաններում ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն: Առավել ևս, որ լոգիստիկ գործունեությունն ուղղված է շուկայական գործընթացների արդյունավետության բարձրացմանն ու ծախսերի օպտիմալացմանը:

Գյուղատնտեսական շուկաներին բավարար հասանելիությունը օգնում է արտադրողներին ապահովել և ստանալ ավելի բարձր հասույթ ներքին և միջազգային վերջնական սպառողներից: Արդյունավետ ագրոլոգիստիկան նաև հնարավորություն է տալիս տեղական արտադրողներին մուտք գործել արտահանման շուկաներ և այդպիսով ընդլայնել իրենց արտադրությունը: Երկրի մակարդակով սա հանգեցնում է արտահանման արտադրանքի մրցունակության բարձրացմանը: Ավելին, գյուղատնտեսական արտադրության և շուկաների միջև արդյունավետ կապերը կարևոր են՝ սննդի որակի պահպանման, օգտագործման ժամկետի երկարացման և կորուստների նվազագույնի հասցնելու համար:

Գյուղատնտեսական ապրանքների տեղափոխումը դաշտից շուկա ներառում է մի քանի փուլ՝ բերքահավաքից հետո մշակում տնտեսությունում, պահեստավորում, վերամշակում և փաթեթավորում, տեղափոխում դեպի մթերման և վերամշակման կենտրոններ, իսկ այնուհետև՝ բաշխման ցանցեր:

Արժեքային շղթայում առաջին քայլը բերքահավաքից հետո մշակումն է արտադրության վայրում: Որոշակի քանակությամբ գյուղատնտեսական արտադրանք այնուհետև պահվում է՝ պահեստներում, մինչդեռ մյուսներն ուղղակիորեն տեղափոխվում են: Արտադրանքից կախված՝ մթերման կենտրոններ և վերամշակման օբյեկտներ տեղափոխումը կատարվում է գյուղական և երկրորդական ճանապարհներով: Այս տեղափոխումը, որպես կանոն, ժամանակ է պահանջում, քանի որ այս ճանապարհները կարող են բարեկարգ չլինել: Երբ սննդամթերքը հասնում է մթերման կենտրոններ կամ վերամշակման կենտրոններ, այն անցնում է մեկ այլ փոխադրման երթուղով՝ երկրորդային և առաջնային ցանցերով դեպի մեծածախ կենտրոններ, որտեղից արտադրանքը բաշխվում է մանրածախ վաճառողներին կամ արտահանման կետերին: Միջազգային շուկայի համար նախատեսված արտադրանքը նույնպես ուղղակիորեն տեղափոխվում է վերամշակման կենտրոններից դեպի

սահման՝ ցամաքային, օդային կամ ծովային ճանապարհներով: Այս շղթայի յուրաքանչյուր փուլում անհրաժեշտ է հետևել արտադրանքի որակի պահպանմանը և կորուստների կրճատմանը, որն իրականացվում է լոգիստիկ համակարգի միջոցով:

Գյուղատնտեսական լոգիստիկայի շղթայի բոլոր փուլերում գործընթացների հստակ կազմակերպումը և կայունությունը կարող է նպաստել ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը, սննդի կորստի և թափոնների սահմանափակմանը, ինչպես նաև օրգանական, առողջարար և բարձրորակ արտադրանքի միավորի հաշվով ծախսերի նվազեցմանը: Ահավասիկ, նախընտրելի են՝ արևային էներգիայով աշխատող սառնարանային պահեստները, վառելիքի խնայողությամբ աչքի ընկնող բեռնատարները և էկոլոգիապես մաքուր սննդի փաթեթավորումը: Այս միջոցառումները կարևոր են ոչ միայն ազգային և միջազգային շուկայի պահանջներին և կլիմայի փոփոխության մեղմացման նպատակներին հասնելու համար, այլև նպաստում են սպառողներին լավագույն ապրանքային տեսքով և անվտանգ սննդամթերք մատակարարելուն: Նշված պայմանները վկայում են ագրոլոգիստիկ համակարգի կարևորության մասին:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել Հայաստանի Հանրապետության ագրոլոգիստիկ համակարգի այն հիմնական գործոնները, որոնք ազդում են ագրոլոգիստիկ շղթայի արդյունավետ գործունեության վրա, ինչպես նաև հիմնավորել այդ համակարգի զարգացման հնարավոր ուղիները, հաշվի առնելով երկրի աշխարհագրական դիրքը, առկա ենթակառուցվածքները և միջազգային լավագույն փորձը:

Այդ նպատակին հասնելու համար ատենախոսի կողմից առանձնացվել են հետևյալ խնդիրները.

- վերլուծել ՀՀ ագրոլոգիստիկ համակարգը, դրա գործառույթները և կազմակերպման առանձնահատկությունները,
- գնահատել համակարգի արդյունավետության վրա ազդող հիմնական գործոնները,
- իրականացնել ՀՀ ագրոլոգիստիկ համակարգի տեխնիկատնտեսական գնահատում,
- մշակել տնտեսամաթեմատիկական մոդելներ՝ տրանսպորտային ծախսերի օպտիմալացման նպատակով,
- կատարել կանխատեսումներ բեռնափոխադրման ծավալների վերաբերյալ,
- ձևակերպել զարգացման ռազմավարական ուղիներ՝ հիմնված համաշխարհային լավագույն փորձի և տեղային վերլուծությունների վրա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունն ամփոփված է երեք գլուխներում, որտեղ ներկայացվում են ագրոլոգիստիկ համակարգի հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը, բացահայտվում են համակարգի արդյունավետության գնահատման և դրա բարձրացման հնարավորությունները: Աշխատանքի առաջին և երրորդ գլուխները բաղկացած են երեք ենթագլխից, իսկ երկրորդ գլուխը՝ երկու մասից: Աշխատանքի կառուցվածքն ու գլուխների հերթականությունը պայմանավորված են ներքին տրամաբանական կապով. սկզբնական հատվածում ներկայացվում և վերլուծվում է Հայաստանի Հանրապետության ագրոլոգիստիկ համակարգի ներկա վիճակն ու առկա խնդիրները, ապա սահմանվում են համակարգի արդյունավետության գնահատման հիմնական չափորոշիչները և ուսումնասիրվում դրանց ապահովման հնարավոր ուղիները: Նշված հաջորդական մոտեցումը հիմք է

հանդիսացել ամփոփիչ գլխում էկոնոմետրիկ մոդելների մշակման և դրանց վրա հիմնված առաջարկությունների ձևակերպման համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությունը շարադրված է 140 էջի վրա:

Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության հիմնական նպատակը, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, աշխատանքի տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված հիմնական արդյունքները, ատենախոսության արդյունքների գիտական և գործնական կիրառական նշանակությունը, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին՝ **«Ագրոլոգիստիկ համակարգի հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը»** գլխում ներկայացվել է ՀՀ ագրոլոգիստիկ համակարգի արդի վիճակը, բացահայտվել են առկա հիմնախնդիրները, միջազգային փորձը և կիրառված մեթոդաբանությունը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ագրոլոգիստիկ համակարգի արդյունավետության գնահատումը և առկա հիմնախնդիրների վերլուծությունը ՀՀ-ում»** գլխում տրվել է ագրոլոգիստիկ համակարգի արդյունավետության գնահատման տնտեսական, քանակական և որակական չափանիշները, ինչպես նաև բացահայտվել և վերլուծվել են դրանց խոչնդոտող գործոններն ու սահմանափակումները ՀՀ-ում:

Ատենախոսության երրորդ՝ **«Ագրոլոգիստիկ համակարգի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում»** գլխում տրվել է ՀՀ

ագրոլոգիստիկ համակարգի տնտեսական գնահատումը՝ էկոնոմետրիկ մոդելավորմամբ և միջազգային առաջավոր փորձի համատեքստում առաջարկվել դրա զարգացման հնարավորությունները:

Ատենախոսությունը եզրափակվում է «Եզրակացություններ» բաժնով, որտեղ ատենախոսական աշխատանքում իրականացված ուսումնասիրությունների 5 արդյունքների հիման վրա ձևակերպվել են ընդհանրական եզրակացությունները և առաջարկությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Աշխատանքում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ստացված տեսական ու գործնական նշանակություն ունեցող արդյունքներից որպես գիտական նորոյթ կարևորվում են հետևյալները.

- Հիմնավորվել է Հայաստանի Հանրապետության ագրոլոգիստիկ ենթահամակարգում այլընտրանքային ճանապարհների շահագործման տնտեսական և ռազմավարական արդյունավետությունը:
- Ամերիկյան փորձի օրինակով հիմնավորվել է ֆինանսական հոսքերի անկանխիկ կառավարման և ֆակտորինգային ծառայությունների ներդրման արդյունավետությունը ՀՀ լոգիստիկ համակարգում, ինչպես նաև առաջարկվել՝ բեռնատարների էլեկտրոնային հաշվիչներով վերազինում, միջնորդական ու բրոքերային ծառայությունների ընդլայնում և «բեռնատարների կայանների» մոդելի ներդրում՝ լոգիստիկ ենթակառուցվածքների բարելավման նպատակով:
- Գնահատվել է ՀՀ լոգիստիկ համակարգում երթուղիների օպտիմալացման ազդեցությունը՝ բեռնափոխադրման ծախսերի կրճատմամբ և արդյունավետության բարձրացմամբ:

- Բացահայտվել է ՀՀ բեռնափոխադրման ծավալների փոփոխության ազդեցությունը երկրի ՀՆԱ-ի վրա՝ տնտեսամաթեմատիկական և էկոնոմետրիկ մոդելների կիրառմամբ:

- Իրականացվել է ՀՀ բեռնափոխադրման ծավալների հնգամյա կանխատեսում՝ ընդգծելով զարգացման հիմնական միտումները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Իրականացված հետազոտության արդյունքները և դրանց հիման վրա ներկայացված առաջարկությունները հավաստի են և ունեն գործնական կիրառելիություն: Վերջիններս կարող են դառնալ հիմք Հայաստանի Հանրապետության ագրոլոգիստիկ քաղաքականության ձևավորման և բարեփոխման գործընթացներում՝ պետական աջակցության ծրագրերի տեխնիկատնտեսական հիմնավորումների մշակման համար՝ մոդելային գնահատումների հիման վրա: Միևնույն ժամանակ, դրանք կիրառելի են նաև մասնավոր հատվածում՝ շուկայական դիրքավորման, փոխադրման երթուղիների օպտիմալացման և լոգիստիկ ծախսերի նվազեցման նպատակներով, ինչն իր հերթին կնպաստի թե՛ պետական, թե՛ գործարար միջավայրում արդյունավետության բարձրացմանը:

Ստացված արդյունքներն առավել մանրամասն և ընդլայնված ներկայացվել են ատենախոսության համապատասխան գլուխներում, ամփոփվելով եզրակացություններ բաժնում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են 7 գիտական հոդվածներում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսության դրական արժանիքների հետ միասին նկատվել են որոշակի թերություններ:

Մասնավորապես՝

1. Ատենախոսը 29-րդ էջում նշում է, որ « Հայաստանի Հանրապետությունում մեկ այլ խոշոր լոգիստիկ գործունեությամբ զբաղվող «Sprayka» ընկերությունը համարվում է առաջատար օպերատոր գյուղատնտեսական արտադրանքի միջազգային տեղափոխման ոլորտում: Ընկերության ավտոպարկը ներառում է ավելի քան 300 սառնարանային բեռնատար միավոր»: Սակայն, 16-րդ հղումով այդ թիվը ավելի քան 320 է, ուստի այս տարբերությունը լրացուցիչ պարզաբանման կարիք ունի:
2. Ատենախոսության թիվ 3 աղյուսակի տվյալներով 2023 թվականին կտրուկ նվազել է երկաթուղային տրանսպորտով փոխադրված բեռների տեսակարար կշիռը, սակայն, այդ փոփոխության պատճառները հեղինակի կողմից չի նշվում:
3. Ատենախոսության երկրորդ գլխում նշվում է, որ ԱՄՆ-ը համարվում է աշխարհում ամենամեծ բեռնափոխադրման հզորություններ ունեցող պետություններից մեկը, որտեղ տարեկան տեղափոխվում է մոտ 18 միլիարդ տոննա բեռ: Այդպիսի ծավալների կառավարումն իրականություն է դարձել թվայնացված լոգիստիկ կառավարման համակարգերի շնորհիվ, որոնք հնարավորություն են տալիս արդյունավետ վերահսկել երթուղիները, հետևել բեռներին և ապահովել դրանց անվտանգ տեղափոխումը: Առաջարկվում է այսպիսի համակարգ կիրառել նաև Հայաստանում: Սակայն ատենախոսը չի հիմնավորում այդ համակարգի ներդրման ծախսերը և տնտեսական արդյունավետությունը:
4. Տնտեսական հիմնավորման անհրաժեշտություն ունեն նաև առանձին բեռնատարների վարորդների վարելու և հանգստանալու ռեժիմների սահմանումը և վերահսկողությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ագրոլոգիստիկ համակարգում ամերիկյան «բեռնատարների կայանների» մոդելների ներդրման առաջարկությունները::

5. Ատենախոսության տեքստում նկատվել են նաև որոշակի խմբագրական և շարահուսական բնույթի թերություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված թերությունները չեն նսեմացնում Տիգրան Արմենի Ղլիջյանի «Ագրոլոգիստիկ համակարգի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության գիտական արժանիքները:

Ատենախոսի կողմից հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսության թեման արդիական է: Ատենախոսությունում ուսումնասիրվել է ՀՀ ագրոլոգիստիկ համակարգի զարգացման խնդիրները և կիրառելով էկոնոմետրիկ հետազոտություններ հանգել է կարևոր առաջարկությունների:

Ատենախոսության սեղմագիրը և հրապարակած հոդվածները բխում են աշխատանքի բովանդակությունից:

Ատենախոսության ստացված արդյունքներն ունեն գործնական և տեսական նշանակություն: Դրանք կարող են օգտակար լինել թեմային նվիրված ուսումնական դասընթացների կազմակերպման, ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների հետազոտությամբ զբաղվող համապատասխան մասնագետների, ասպիրանտների և ուսանողների համար: Հետազոտության առանձին դրույթներ և առաջարկություններ կարող են կիրառվել ՀՀ կառավարության կողմից լոգիստիկ համակարգի քաղաքականության բարելավմանն ուղղված ծրագրերի մշակման նպատակով:

Տիգրան Արմենի Ղլիջյանի «Ագրոլոգիստիկ համակարգի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը իր արդիականությամբ, հիմնավորվածությամբ ու գիտական մակարդակով համապատասխանում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կարգի» յոթերորդ կետի, ինչպես նաև թեկնածուական

ատենախոսություններին Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Ավետիսյան



Սամվել Սերյոժայի

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ հետազոտող,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ
հետազոտող, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Սամվել Սերյոժայի
Ավետիսյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՊՏՀ գիտական քարտուղար՝



Լաիրա Դարբինյան



09. 01. 2026թ.